ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ-ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N J529-20

ք. Երևան

«19» մայիսի 2020թ.

«ԷՎՐԻ ԴԵՅ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «Մատակարար-վաճառող»), ի դեմս տնօրեն Արման Մանասերյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «Գնորդ»), ի դեմս տնօրեն Դավիթ Փափազյանի, մյուս կողմից հետագա շարադրանքում միասին անվանվելով «*Կողմեր*», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «*Կողմ*», գործելով ՀՀ օրենսդրության հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Մատակարար-վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով Գնորդին՝ վերջինիս կողմից ներկայացված պատվերի հիման վրա, մատակարարել Պայմանագրի 1.2 կետով սահմանված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց:

1.2. Մատակարար-վաճառողի կողմից մատակարարվող ապրանքներն են (այսուհետ նաև՝ ապրանք)՝
ա) 19 լիտր տարողությամբ շրջանառելի (բազմակի օգտագործման) տարաներով (շշերով) մատակարարվող «Բյուրեղ» աղբյուրի ջուր,
բ) 19 լիտր տարողությամբ շրջանառելի (բազմակի օգտագործման) տարաներով (շշերով) մատակարարվող «ՋուրՋուր» խմելու ջուր,
գ) 12 լիտր տարողությամբ շրջանառելի (բազմակի օգտագործման) տարաներով (շշերով) մատակարարվող «ՋուրՋուր» խմելու ջուր,
դ) 18.9 լիտր տարողությամբ շրջանառելի (բազմակի օգտագործման) տարաներով (շշերով) մատակարարվող «Մաքուր Ջուր» աղբյուրի ջուր,
ե) մեկանգամյա օգտագործման բաժակներ:

1.3. Պայմանագրի «ա» ենթակետից մինչև «դ» ենթակետում նշված ապրանքը խցանափակվում է մեկանգամյա օգտագործման խցաններով:

2. Ապրանքի մատակարարման-վաճառքի իրականացման կարգն ու պայմանները

2.1. Ապրանքի մատակարարում-վաճառքը իրականացվում է Գնորդի կողմից համապատասխան պատվերի ներկայացման պահից՝ Պայմանագրով և կողմերի միջև բանավոր համաձայնեցված ժամկետներում և կարգով:

2.2. Պատվեր է համարվում իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից Պայմանագրով ամրագրված ցանկացած ապրանքի գնման հայտը և այն Գնորդին առաքելու/վաճառելու պահանջը:

2.3. Պատվերը համարվում է պատշաճ ներկայացված, երբ Գնորդն իր պահանջը ներկայացնում է Մատակարար-վաճառող ընկերության գործող հեռախոսահամարին զանգահարելու, ձայնային հաղորդակցություն թողնելու, Մատակարար-վաճառողի էլեկտրոնային փոստին պահանջը ուղարկելու, ինչպես նաև ինտերնետային կայքով պահանջը գրանցելու միջոցով:

2.4. Յուրաքանչյուր պատվերի նվազագույն քանակ է սահմանվում 2 (երկու) շիշ ջուրը՝ անկախ ապրանքատեսակից:

2.5. Ապրանքը համարվում է պատշաճ մատակարարված (առաքված), երբ Մատակարար-վաճառողի կողմից լիազորված անձը՝ առաքիչը, Պայմանագրով, ինչպես նաև պատվերի հիման վրա իրականացնում է պատվիրված ապրանքի առաքումը Գնորդին՝ վերջինիս կողմից նշված հասցեով: Ապրանքի մատակարարման (առաքման) օրն է հանդիսանում Մատակարար-վաճառողի կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրում որպես «մատակարարման օր» նշված ամսաթիվը:

2.6. Ապրանքի մատակարարումն, ինչպես նաև բեռնաթափումն ու բեռնափոխադրումն իրականացվում է Մատակարար-վաճառողի կողմից՝ սեփական տրանսպորտային միջոցներով:

2.7. Շիշը (19լ, 18.9լ և 12լ տարողությամբ շրջանառելի տարան) հանդիսանում է Մատակարար-վաճառողի սեփականությունը: Ջրի առաքման ընթացքում այն Պատվիրատուին է տրամադրվում անվճար շահագործման պայմանով և ենթակա չէ վաճառքի:

2.8. Ջրի առաքման օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում, շիշն անվճար շահագործման նպատակով տրամադրվում է Պատվիրատուին և ենթակա է վերադարձման ոչ ուշ, քան առաքման օրվան հաջորդող 31-րդ օրը:

2.9. Եթե մինչև Պայմանագրի 2.8 կետում նշված ժամկետի ավարտը Գնորդը ներկայացնում է նոր պատվեր, ապա նախորդ պատվերի (պատվերների) ընթացքում առաքված շիշը (շշերը) Մատակարար-վաճառողը Գնորդից ետ է ընդունում նախորդ առաքման վայրում (հասցեում), այլապես Գնորդը պարտավորվում է իրեն անհատույց օգտագործման հանձնված շիշը (շշերը), Պայմանագրի 2.8 կետում սահմանված ժամկետում, իր միջոցներով և հաշվին վերադարձնել Մատակարար-վաճառողին՝ վերջինիս փաստացի գործունեության վայրում (հասցեում):

2.10. Այն դեպքում, երբ վերադարձվող տարաների (19լ, 18.9լ և/կամ 12լ) քանակը համապատասխանում է վերադարձի օրը Գնորդին առաքված տարաների քանակին, ապա առաքվող ջրի հաշիվ-ապրանքագիրը կհանդիսանա նաև վերադարձվող տարաների երկկողմանի հանձնման-ընդունման ակտ:

2.11. Այն դեպքում, երբ վերադարձվող տարաների (19լ, 18.9լ և/կամ 12լ) քանակը չի համապատասխանում վերադարձի օրը Գնորդին առաքված տարաների քանակին, ինչպես նաև ցանկացած այլ դեպքում, տարաների վերադարձը հավաստվում է Մատակարար-վաճառողի կողմից կազմված համապատասխան հանձնման-ընդունման ակտով:

2.12. Եթե Գնորդը Մատակարար-վաճառողից գնած ջուրը սպառում է էլեկտրական դիսպենսեր (ջրալից-բաշխիչ) սարքի միջոցով, ապա վերջինս իրավունք ունի օգտվելու Մատակարար-վաճառողի կողմից տրամադրվող՝ դիսպենսերների սանիտարական մաքրման ծառայությունից, որի տարեկան պլանային և արտապլանային արժեքին հնարավոր է ծանոթանալ www.jur.am ինտերնետային կայքի միջոցով: Տարեկան պլանն իր մեջ ներառում է առավելագույնը 2 (երկու) սանիտարական մաքրում, որից առաջինն իրականացվում է, որպես կանոն, սանիտարական մաքրում իրականացնելու պատվերի օրը, իսկ երկրորդը՝ նախորդ սանիտարական մաքրման 6-րդ ամսվան հաջորդող 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում Գնորդի մեղքով սանիտարական մաքրում չիրականացնելու դեպքում՝ երկրորդ սանիտարական մաքրման պատվերը չեղարկվում է:

2.13. Խորհուրդ է տրվում կազմակերպել դիսպենսերի սանիտարական մաքրում տարեկան առնվազն երկու անգամ: Մատակարար-վաճառողը պատասխանատվություն չի կրում սանիտարական մաքրման ծառայության կազմակերպման պարբերականության համար:

2.14. Գնորդի ցանկության դեպքում Մատակարար-վաճառողը հեռախոսակապի միջոցով կարող է ներկայացնել ինքնուրույն սանիտարական մաքրում իրականացնելու կարգը՝ որպես կոմպենսատոր մաքրում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Մատակարար-վաճառողն իրավունք ունի՝

3.1.1. Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով սահմանված կարգով և/կամ ներկայացված պատվերի հիման վրա մատակարարված ապրանքը:

3.1.2. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով սահմանված կարգով և/կամ ներկայացված պատվերի հիման վրա մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.1.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Գնորդը թույլ է տվել Պայմանագրի էական խախտումներ: Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում Պայմանագրի 6.2 կետով սահմանված դեպքերում:

3.2. Մատակարար-վաճառողը պարտավոր է՝

3.2.1. Գնորդին հանձնել Պայմանագրով և/կամ ներկայացված պատվերով նախատեսված որակի և քանակի ապրանք:

3.2.2. ապրանքը մատակարարել Գնորդի կողմից նշված հասցեով՝ տվյալ տարածքի համար Մատակարար-վաճառողի կողմից սահմանված գրաֆիկով: Եթե Գնորդի կողմից նշված հասցեն Երևան քաղաքում չէ, Մատակարար-վաճառողն իրավասու է Գնորդին առաջարկել Երևան քաղաքի սահմաններում գտնվող մեկ այլ հասցե:

3.3. Գնորդն իրավունք ունի՝

3.3.1. պահանջել Մատակարար-վաճառողից վերջինիս մատակարարել Պայմանագրով և/կամ ներկայացված պատվերով նախատեսված որակի և քանակի ապրանք:

3.3.2. եթե մատակարարվել է Պայմանագրով կամ պատվերով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը:

3.3.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարար-վաճառողը թույլ է տվել Պայմանագրի էական խախտումներ: Մատակարար-վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում Պայմանագրի 6.3 կետով սահմանված դեպքերում:

3.4. Գնորդն պարտավոր է՝

3.4.1. Դատարկ տարան/տարաները (շիշը) վերադարձնել Մատակարար-վաճառողին հերթական (հաջորդ) առաքման ժամանակ, բայց ոչ ուշ քան, ապրանքի առաքման օրվան հաջորդող 31-րդ օրը:

3.4.2. **Չվնասել շիշը, չօգտագործել այն այլ նպատակներով, չլցնել այն այլ հեղուկներով (ներառյալ ծորակի ջրով) և այլ նյութերով:**

3.4.3. Մատակարար-վաճառողին տեղյակ պահել ընկերության վերակազմակերպման կամ լուծարման մասին դիմում ներկայացնելուց 5 (հինգ) օր առաջ, ինչպես նաև՝ իր դեմ սնանկության կամ վերակազմակերպման կամ լուծարման վարույթ հարցվելուց 4 (չորս) օրացույցային օրվա ընթացքում:

3.4.4. Վճարել Պայմանագրի 4-րդ գլխում նշված ապրանքի մատակարարման (վաճառքի) գինը Պայմանագրով և հաշիվ-ապրանքագրով նախատեսված ժամկետներում և կարգով:

3.4.5. Ծանուցել Մատակարար-վաճառողին, եթե պատվերով որոշված քանակից ավելի ապրանք է հանձնվել վերջինիս:

4. Պայմանագրի գինը և վճարման կարգը

4.1. Գնորդին «Բյուրեղ» աղբյուրի ջուրը կտրամադրվի մեկ շիշը (19լ) 1,950 (մեկ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամով, 19 լիտրանոց 22ով «ՋուրՋուր» խմելու ջուրը՝ մեկ շիշը 1,600 (մեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամով, 12 լիտրանոց 22ով «ՋուրՋուր» խմելու ջուրը՝ մեկ շիշը 1,100 (մեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամով, 18.9 լիտրանոց 22ով «Մաքուր Ջուր» աղբյուրի ջուրը՝ մեկ շիշը 1,800 (մեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամով, մեկանգամյա օգտագործվող բաժակների մեկ հատի արժեքը 10 (տասը) ՀՀ դրամ, սառը ջրի համար նախատեսված բաժակի մեկ հատի արժեքը կազմում է 6 (վեց) ՀՀ դրամ, թափանցիկ բաժակների մեկ հատի արժեքը՝ 9 (ինը) ՀՀ դրամ: Բոլոր գները ներառում են 20% ԱԱՀ:

4.2. Եթե Գնորդը պատվիրում է 1 (մեկ) շիշ ջուր՝ Մատակարար-վաճառողը իրավունք ունի պահանջելու վճարել հավելյալ 250-ական (երկու հարյուր հիսունական) ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր նման պատվերի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվերի ընդհանուր գումարը գերազանցում է 3,800 (երեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամը, ինչպես նաև, երբ գնորդ է հանդիսանում կենսաթոշակային տարիքի միայնակ ապրող և հաշմանդամություն ունեցող անձը:

4.3. Պայմանագրի 4.1 և 4.2 կետերում նշված գինն իր մեջ ներառում է ապրանքի առաքման տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև սույն պայմանագրի կատարման հետ կապված Մատակարար-վաճառողի այլ ծախսերը:

4.4. Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջի հիման վրա առաքման ընթացքում գտնվող պատվերի հետաձգման դեպքում Մատակարար-վաճառողը կարող է պահանջել վճարել հավելյալ մինչև 300 (երեք հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ 20% ԱԱՀ) հետաձգման հավելավճար՝ յուրաքանչյուր նման Պատվերի համար:

4.5. Գնորդի կողմից, պատվերում նշված քանակից ավելի ապրանք ընդունելու դեպքում, լրացուցիչ ընդունված ապրանքի համար վճարվում է նույն ապրանքի համար Պայմանագրով սահմանված գինը:

4.6. Գնորդի կողմից վճարումը կարող է կատարվել կանխիկ կամ բանկային փոխանցում կատարելու միջոցով՝ հաշիվ-ապրանքագրում նշված մատակարարման ամսաթվից հաշվարկված 15 (տասնհինգ) բանկային օրվա ընթացքում, ընդ որում հաշիվ-ապրանքագրի հաստատմամբ (ստորագրմամբ) հավաստվում է պատվիրված ապրանքների մատակարարված լինելու փաստը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. **Շիշը վնասելու կամ չվերադարձնելու դեպքում Գնորդը պարտավորվում է յուրաքանչյուր 22ի դիմաց Մատակարար-վաճառողին վճարել 6,000 (վեց հազար) ՀՀ դրամի չափով գումար:**

Շիշը համարվում է վնասված (ոչ ենթակա օգտագործման), երբ 22ի մակերեսին (ներառյալ պիտակին) օգտագործողի կողմից հասցված ֆիզիկական վնասի և ապրանքային տեսքի խաթարման պատճառով բացառվում է դրա հետագա շահագործումը (օրինակ, ի թիվս այլնի, շիշը ծակելը, դեֆորմացնելը, խորը քերծելը, 22ի վրա քիմիական նյութեր, սոսինձ, ներկեր քսելը և այլն):

5.2. Շիշը համարվում է չվերադարձված, եթե խախտվել են Պայմանագրի 2.8 և 3.4.1 կետերի պահանջը:

5.3. Մատակարար-վաճառողը պատասխանատվություն չի կրում մատակարարված ջրի (ապրանքի) սպառման համար օգտագործվող սարքավորման սանիտարահիգիենիկ վիճակի համար:

5.4. Մատակարար-վաճառողը պատասխանատվություն է կրում ապրանքի թերությունների համար, եթե գնորդն ապացուցում է, որ ապրանքի թերություններն առաջացել են մինչև իրեն հանձնելու պահը կամ մինչև այդ պահը ծագած պատճառներից:

5.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Պայմանագրով իր պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած Կողմը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդպիսի հանգամանքներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

6.1. Պայմանագիրը կարող է լրացվել և/կամ փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները պետք է կատարվեն գրավոր և ստորագրվեն՝ Կողմերի կողմից:

Մատակարար-վաճառողն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը Գնորդի կողմից 3.4 կետով սահմանված պարտադիր պահանջների խախտման, Պայմանագրի 4-րդ գլխով ամրագրած վճարումները 60 (վաթսուն) օրից ավելի ուշացնելու (չկատարելու) և 31 (երեսունմեկ) օրից ավելի ապրանք չպատվիրելու դեպքում:

6.3. Գնորդն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը Մատակարար-վաճառողի կողմից Պայմանագրի 3.2 կետով սահմանված պահանջների խախտման դեպքում:

6.4. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, մյուս կողմին առնվազն 15 (տասնհինգ օր) առաջ գրավոր ծանուցում ուղարկելուց հետո՝ կատարելով մինչ Պայմանագրի լուծումն առաջացած պայմանագրային պարտավորությունները:

7. Կիրառվող իրավունքը և վեճերի լուծման կարգը

7.1. Պայմանագրի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքները և այլ իրավական ակտերը:

7.2. Պայմանագրից կամ դրա կապակցությամբ ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները և պահանջները, ներառյալ՝ դրա կատարմանը, խախտմանը, դադարեցմանը կամ անվավերությանը վերաբերող, ենթակա են կարգավորման՝ Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով, իսկ, 10 (տասը) օրվա ընթացքում համաձայնության չհասնելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության իրավասու դատական ատյաններում:

8. Գաղտնիություն և անձնական տվյալների պաշտպանություն

8.1. Պատվերը ձևակերպելու ժամանակ Գնորդն իր մասին ի թիվս այլնի տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը՝ իրավաբանական անձի անվանում, հեռախոսի համար, էլեկտրոնային հասցե, գտնվելու վայրի հասցե, որտեղ պետք է մատակարարվի պատվիրված Ապրանքը:

8.2. Մատակարար-վաճառողը օգտագործում է Գնորդից ստացված տեղեկատվությունը՝ Գնորդի հանդեպ ձեռք բերված իր պարտականությունները կատարելու համար:

8.3. Մատակարար-վաճառողը պարտավորվում է չհրապարակել Գնորդից ստացված տվյալները՝ բացառությամբ սույն Պայմանագրով և օրենքով սահմանված դեպքերի:

8.4. Գնորդը պարտավորվում է չհրապարակել Մատակարար-վաճառողից ստացված և Կողմերի միջև օգտագործվող տվյալները (տեղեկատվությունը): Մասնավորապես, ի թիվս այլնի, Գնորդը պարտավորվում է չհրապարակել Կողմերի միջև կնքված կամ ապագայում կնքվելիք պայմանագրերի/համաձայնագրերի բովանդակությանը վերաբերող տեղեկատվությունը, Մատակարար-վաճառողի գնային քաղաքականությանը վերաբերող տեղեկատվությունը, Գնորդի հանդեպ կիրառված զեղչային համակարգին վերաբերող տվյալները և այլն (այսուհետ նաև՝ Գաղտնի տեղեկատվություն):

8.5. Գաղտնի տեղեկատվությունը պահպանելու պարտականությունը սահմանափակված չէ ժամանակով: Ընդունողը պետք է ապահովի դրա պահպանությունը նաև Պայմանագիրը լուծելուց և/կամ դրա գործողության ժամկետը լրանալուց հետո:

8.6. Երրորդ անձանց (ցանկացած անձ, մարմին, հիմնարկ կամ կազմակերպություն, որոնց կարող է հայտնի դառնալ պահպանվող Գաղտնի տեղեկատվությունը) Գաղտնի տեղեկատվության փոխանցում է համարվում՝ Գաղտնի տեղեկատվության որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողությունը, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով Գաղտնի տեղեկատվությունը հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով Գաղտնի տեղեկատվությունը այլ անձի մատչելի դարձնելը:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

9.2. Գնորդի վավերապայմանների յուրաքանչյուր և ցանկացած փոփոխության դեպքում՝ վերջինս պարտավոր է ծանուցել դրա մասին Մատակարար-վաճառողին՝ այդպիսի փոփոխության պահից 7 (յոթ) օրվա ընթացքում:

9.3. Պայմանագրի դրույթները մեկնաբանելիս Կողմերը պետք է ելնեն նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Անհարիհության դեպքում Պայմանագրի որոշակի դրույթներ մեկնաբանվում են պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի համատեքստում:

9.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Մատակարար-վաճառող՝
«ԷՎՐԻ ԴԵՅ» ՓԲԸ
Իրավ. և գործ. հասցե՝
ք. Երևան, Դավիթ Բեկ 54/5
ՀՎՀՀ՝ 09104669
Հ/Հ՝ 217001111525001
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ

Տնօրեն՝ Արման Մանասերյան

Գնորդ՝
«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Մ. Աղամյան 2/2
Գործ. հասցե՝ ք. Երևան, Հանրապետության 37
ՀՎՀՀ՝ 02697868
Հ/Հ՝ 24149001211900
Յունիբանկ ԲԲԸ

Տնօրեն՝ Դավիթ Փափազյան